# ՀՈԳԵՎՈՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԱՅՐԵՐԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐ

**Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 15 դեկտեմբերի 2000 թ.:**

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրավերով Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայաստանի թեմակալ առաջնորդների և հանրապետության մարզպետների հանդիպում:

Ամանորի նախաշեմին թեմակալ առաջնորդների և մարզային իշխանությունների նմանօրինակ հանդիպումը Ս. Էջմիածնում դառնում է ավանդական: Գրեթե մեկ տարի առաջ ևս հոգևոր և պետական այրերի համատեղ ջանքերով մշակվեցին և հաջողությամբ իրականացվեցին Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոնական միջոցառումներ:

Ողջունելով ներկաներին, Նորին Սրբությունը տեղեկացրեց, որ այս տարի Մայր Աթոռ Ս. Էջմիածինը հանդես է գալիս «Նոր տարին՝ հայ մանուկներին» ամանորյա նախաձեռնությամբ, որը նախատեսում է տոնական հանդեսներ իրականացնել հանրապետության բոլոր մարզերում:

«*Մեր նպատակն է մանուկների համար ուրախալի և հիշարժան դարձնել Նոր տարին ու Ս. Ծնունդը, հատկապես, երբ գալիք տարին առանձնակի նշանակություն ունի բոլորիս համար*»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ նշելով, որ ծրագրի իրականացման համար Մայր Աթոռը որոշակի գումար է առանձնացրել յուրաքանչյուր մարզի և Երևանի համար: Այդ նպատակով ԱՄՆ Արևելյան թեմի միջնորդությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնին 100 հազար դոլար են հատկացրել ամերիկահայ բարերարներ տեր և տիկին Գյուլամիրյանները: Ակնկալվում են նաև լրացուցիչ միջոցներ այլ բարերարների կողմից:

Հանդիպման ընթացքում հոգևոր և պետական այրերը քննարկեցին մանուկների Ամանորը առավել հետաքրքիր ու գրավիչ դարձնելուն նվիրված հարցեր:

Վեհափառ Հայրապետը հյուրերին ներկայացրեց նաև Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հոբելյանական տոնակատարությունների եկեղեցական ծրագրերը: